Ծաղիկներ իմ հարևանի համար

Պիտեր Ի., 10 տարեկան, Յուտա (ԱՄՆ)

Մի քանի տարի առաջ հարևանիս ամուսինը մահացավ: Նա շատ տխուր էր:

Ես գիտեի, թե ինչ բան է կորցնել մեկին, ում սիրում ես: Երբ ես երեք տարեկան էի, մայրս մահացավ: Նրա մահից հետո իմ թաղամասի երեխաները ինձ ու եղբորս գրություններ գրեցին ու մեր բակը զարդարեցին խաղալիքներով: Ես ուզում էի նույնքան հաճելի բան անել իմ հարևանի համար:

Ես աղոթեցի, որպեսզի իմանամ, թե ինչ կարող եմ անել՝ օգնելու համար: Մի միտք ծագեց իմ գլխում՝ Վալենտինի օրը նրան ծաղիկներ նվիրել: Այնուամենայնիվ, ինձ անհրաժեշտ էր գումար վաստակել ծաղիկները գնելու համար: Գումար վաստակելու իմ նպատակի մասին ես գրեցի *Երեխաների ուղեցույց* գրքույկում:

Ես գումար վաստակեցի ուրիշների համար տարբեր աշխատանքներ կատարելով: Տատիկս ինձ վճարեց իր այգին ու բակի տերևները մաքրելու համար: Տանը ես գումար էի վաստակում՝ մաքրելով մեր ցախատան հետևի մոլախոտերը: Բավարար գումարը վաստակելու համար ամիսների տքնաջան աշխատանք պահանջվեց:

Վերջապես ես բավականաչափ գումար ունեցա խանութ գնալու և ծաղիկներ գնելու համար: Եկավ Վալենտինի օրը, և ես իմ հարևանին տվեցի ծաղիկները մի գրությամբ: Նա շատ երջանիկ էր: Ես ևս ջերմություն և խաղաղություն զգացի: Ես շնորհակալություն հայտնեցի Երկնային Հորը, որ օգնեց ինձ անել այն, ինչ Նա ուզում էր, որ ես անեմ: ●

ԱՄՈՒՐՅԱՆ ԴԵՊՔՈՎ